ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2015թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2015 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.270-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող թվով 29 (քսանինը) բնակարաններն անհատույց օտարել (նվիրել) կից հավելվածում նշված քաղաքացիներին:

2. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն հանդիսացող սույն որոշման հավելվածի 26-րդ տողում ամրագրված բնակարանը փոխանակել Հովհաննես Ավանեսյանին և Թամարա Ավանեսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Շիրակի փողոցի հ.2ա շենքի հ.218, 216 բնակարանի հետ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով նախատեսվում է բնակարանների տրամադրում թվով 30 (երեսուն) ընտանիքների: Նշված թվով 30 ընտանիքից 28-ը՝ ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) կամ զինվորական ծառայության ժամանակ վնասվածքներից, խեղումներից և առաջացած հիվանդություններից հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) խիստ կարիքավոր ընտանիքներն են, որոնց, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանման կողմից տրվել է զոհվածի (մահացածի) ընտանիքի անդամի կամ հաշմանդամի կարգավիճակը հավաստող տեղեկանք: Այս ընտանիքները մինչ այս պահը տարբեր ժամանակահատվածներում Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում, որպես զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) օրենքով սահմանված կարիքավոր ընտանիքներ վերցվել են հաշվառման՝ բնակարանային պայմանների ապահովման նպատակով՝ անհատույց պետական ֆինանսական աջակցություն ստանալու համար: Նշված ընտանիքները հիմնականում չունեն սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածություն և ապրում են ժամանակավոր կացարաններում, խարխուլ տներում, բնակության համար ոչ պիտանի շինություններում, ազգականների մոտ, ինչպես նաև վարձակալական հիմունքներով կամ համարվում են բնակարանային պայմանների խիստ կարիքավորներ:

Վերոնշյալ ընտանիքների մասով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից միջնորդություն է ներկայացվել Երևան քաղաքում պետական միջոցների մասնակցությամբ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքերից վերջիններիս բնակարաններով ապահովելու համար:

Մնացած թվով 2 դեպքերով նախատեսվում է բնակարաններ տրամադրել Հայաստանի Հանրապետության և Արցախի սահմանների պաշտպանության համար մղված մարտական գործողությունների ակտիվ մասնակիցներ՝ ազատամարտիկների ընտանիքներին, հաշվի առնելով նրանց բնակարանային խիստ կարիքավորությունը, ինչպես նաև ազատամարտիկների ավանդը հայրենիքի սահմանների պաշտպանության գործում:

Երևանի քաղաքապետարանի կողմից այցելություններ է կազմակերպվել վերոնշյալ թվով 30 ընտանիք, տեղում կատարվել է տեղատեսություն, ուսումնասիրվել է վերջիններիս

բնակարանային պայմանները և ցուցաբերվել է մեթոդական աջակցություն անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրման հարցում:

Ստորև ներկայացվում է որոշման հավելվածում նշված ընտանիքների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն.

Քաղաքացի Վարդուհի Նադրյանը հանդիսանում է զինծառայող՝ 1964 թվականին ծնված Ներսես Գրիգորի Բարբարյանի մայրը: Վերջինս 1991 թվականի մայիսի 24-ին զոհվել է Շահումյանի շրջանում մարտական գործողությունների ժամանակ:

Քաղաքացի Վարդուհի Նադրյանը անօթևան է և բնակվում է Նոր Արեշ 46-րդ փողոցի հ.60 հասցեում գտնվող բնակելի տանը, որի սեփականատերը վերջինիս ազգականն է:

Վերջինս, որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում 2007 թվականին վերցվել է հաշվառման՝ բնակարանային պայմանների բարելավման նպատակով:

Քաղաքացի Էմմա Շաշիկյանը հանդիսանում է զինծառայող՝ 1948 թվականին ծնված Հարություն Գալուստի Շաշիկյանի այրին: Վերջինս 1992 թվականի սեպտեմբերի 20-ին զոհվել է Լաչինի շրջանում մարտական գործողությունների ժամանակ:

Քաղաքացի Էմմա Շաշիկյանը անօթևան է և բնակվում է Կամարակի 2-րդ նրբանցքի հ.32 հասցեում գտնվող բնակելի տան մի սենյակում, որի սեփականատերը վերջինիս հորեղբոր կինն է:

Տիկին Շաշիկյանը՝ որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում 2008 թվականին վերցվել է հաշվառման՝ բնակարանային պայմանների բարելավման նպատակով:

Քաղաքացիներ Արկադի Գեորգիյանը և Գալինա Զարգարյանը հանդիսանում են զինծառայող՝ 1973 թվականին ծնված Ֆուրման Արկադիի Գեորգիյանի ծնողները: Վերջինս 1992 թվականի սեպտեմբերի 29-ին զոհվել է մարտական առաջադրանք կատարելիս:

Քաղաքացիներ Արկադի Գեորգիյանը և Գալինա Զարգարյանը բնակվում են Սիլիկյան թաղամասի հ.42 հասցեում գտնվող քոթեջատիպ տնակում, որը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է իրենց: Նշված քոթեջատիպ տնակի բնակելի մակերեսը կազմում է 17.4 քմ, որում հաշվառված բնակվում են նաև վերջիններիս աղջիկը՝ Ռենա Գեորգիյանը և Արկադի Գեորգիյանի մայրը՝ Փիրուզա Ղարախանյանը:

Վերջիններս, որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում 2008 թվականին վերցվել են հաշվառման՝ բնակարանային պայմանների բարելավման նպատակով:

Քաղաքացի Ռիտա Նավոյանը հանդիսանում է զինծառայող՝ 1943 թվականին ծնված Տիգրան Եղիշի Հովհաննիսյանի այրին: Վերջինս 1995 թվականի հունիսի 24-ին զոհվել է Մարտակերտի շրջանում մարտական գործողությունների ժամանակ:

Քաղաքացի Ռիտա Նավոյանը անօթևան է և իր որդեգրած տղայի և աղջկա հետ միասին վարձակալական հիմունքներով բնակվում է Չարենցի փողոցի հ.56 բնակելի տանը:

Վերջինս, որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում 2008 թվականին վերցվել է հաշվառման՝ բնակարանային պայմանների բարելավման նպատակով:

Քաղաքացի Գրետա Քիրիզյանը հանդիսանում է զինծառայող՝ 1978 թվականին ծնված Հակոբ Թովմասի Քիրիզյանի մայրը: Վերջինս 1996 թվականի դեկտեմբերի 10-ին մահացել է Նոյեմբերյանի շրջանում ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ:

Քաղաքացի Գրետա Քիրիզյանը անօթևան է և բնակվում է Արտաշատ քաղաքի Բյուրական գյուղում՝ ազգականի տանը:

Վերջինս, որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում 2008 թվականին վերցվել է հաշվառման՝ բնակարանային պայմանների բարելավման նպատակով:

Քաղաքացի Մայրանուշ Սարգսյանը հանդիսանում է զինծառայող՝ 1976 թվականին ծնված Կարեն Աշոտի Վարդանյանի մայրը: Վերջինս 1997 թվականի հուլիսի 2-ին մահացել է մարտական առաջադրանք կատարելու ժամանակ:

Քաղաքացի Մայրանուշ Սարգսյանը անօթևան է և իր աղջկա հետ վարձակալական հիմունքներով բնակվում է Վիլնյուսի փողոցի հ.49 շենքի հ.29 բնակարանում:

Վերջինս, որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում 2008 թվականին վերցվել է հաշվառման՝ բնակարանային պայմանների բարելավման նպատակով:

Քաղաքացի Ժենյա Տեր-Ստեփանյանը հանդիսանում է զինծառայող՝ 1966 թվականին ծնված Աղավնի Հարությունի Տեր-Ստեփանյանի մայրը: Վերջինս 1992 թվականի հուլիսի 29-ին զոհվել է Լաչինի շրջանում մարտական գործողությունների ժամանակ:

Քաղաքացի Ժենյա Տեր-Ստեփանյանը իր թոռան հետ, որի խնամակալը հանդիասնում է ինքը, և որը ներկայումս գտնվում է զինվորական ծառայության ընթացքում, միասին վարձակալական հիմունքներով բնակվում են Նորքի 9-րդ միկրոշրջանի հ.16ա շենքի հ.3 բնակարանում:

Վերջինս, որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում 2009 թվականին վերցվել է հաշվառման՝ բնակարանային պայմանների բարելավման նպատակով:

Քաղաքացի Զինա Բարսեղյանը հանդիսանում է զինծառայող՝ 1961 թվականին ծնված Ռուբիկ Զիվանշիրի Պետրոսյանի այրին: Վերջինս 1992 թվականի օգոստոսի 22-ին զոհվել է Մարտակերտի շրջանում մարտական գործողությունների ժամանակ:

Քաղաքացի Զինա Բարսեղյանը անօթևան է իր աղջկա՝ Ալվարդ Պետրոսյանի հետ միասին բնակվում է Նորքի ուսանողական ավանի 1-ին մասնաշենքի հ.605 սենյակում:

Վերջինս, որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում 2009 թվականին վերցվել է հաշվառման՝ բնակարանային պայմանների բարելավման նպատակով:

Քաղաքացի Մարինե Ներսիսյանը հանդիսանում է զինծառայող՝ 1956 թվականին ծնված Վարազդատ Հայաստանի Ավագյանի կինը: Վերջինս 2009 թվականի նոյեմբերի 13-ին մահացել է ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ ստացած կոնտուզիայի հետևանքով:

Քաղաքացի Մարինե Ներսիսյանը անօթևան է և իր երկու անչափահաս երեխաների հետ բնակվում է Շենգավիթ 14-րդ փողոցի հ.22 հասցեում գտնվող բնակելի տանը, որի սեփականատերը վերջինիս ազգականն է:

Վերջինս, որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում 2010 թվականին վերցվել է հաշվառման՝ բնակարանային պայմանների բարելավման նպատակով:

Քաղաքացի Արմիկ Հակոբջանյանը հանդիսանում է զինծառայող՝ 1932 թվականին ծնված Սպարտակ Աշոտի Հակոբջանյանի կինը: Վերջինս 1995 թվականի հունվարի 14-ին զոհվել է Մարտակերտի շրջանում մարտական գործողությունների ժամանակ:

Քաղաքացի Արմիկ Հակոբջանյանը իր երկու տղայի և հարսի հետ վարձակալական հիմունքներով բնակվում է Անդրանիկի փողոցի հ.10 շենքի հ.44 բնակարանում:

Վերջինս, որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում 2010 թվականին վերցվել է հաշվառման՝ բնակարանային պայմանների բարելավման նպատակով:

Քաղաքացի Անուշ Հայրապետյանը հանդիսանում է ՀՀ նախագահի և բարձրաստիճան պաշտոնատար անձանց անվտանգության վարչության նախկին աշխատակից Անդրանիկ Էդիկի Հայրապետյանի այրին: Վերջինս 1992 թվականի մարտի 8-ին զոհվել է ՀՀ սահմանները պաշտպանելիս, մարտական հանձնարարություն կատարելու ժամանակ:

Քաղաքացի Անուշ Հայրապետյանը անօթևան է և իր երկու տղաների հետ միասին բնակվում է ազգականի տանը:

Վերջինս, որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում 2010 թվականին վերցվել է հաշվառման՝ բնակարանային պայմանների բարելավման նպատակով:

Քաղաքացի Կարինե Խաչատրյանը հանդիսանում է զինծառայող՝ 1978 թվականին ծնված Արմեն Հովհաննեսի Խանամիրյանի մայրը: Վերջինս 1999 թվականի սեպտեմբերի 4-ին մահացել է զինվորական ծառայության ընթացքում:

Քաղաքացի Կարինե Խաչատրյանը անօթևան է և իր ծնողների հետ միասին վարձակալական հիմունքներով բնակվում է Աջափնյակի 16-րդ թաղամասի հ.41 շենքի հ.17 բնակարանում:

Վերջինս, որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում 2013 թվականին վերցվել է հաշվառման՝ բնակարանային պայմանների բարելավման նպատակով:

Քաղաքացի Սիրվարդ Գրիգորյանը հանդիսանում է զինծառայող՝ 1952 թվականին ծնված Գրիգոր Հմայակի Գրիգորյանի կինը: Վերջինս 2005 թվականի մարտի 31-ին մահացել է զինվորական ծառայության ընթացքում ստացած հիվանդությունից:

Քաղաքացի Սիրվարդ Գրիգորյանը անօթևան է և իր աղջկա ու երկու թոռների հետ միասին վարձակալական հիմունքներով բնակվում է Խորենացի փողոցի հ.27 շենքի հ.78 բնակարանում:

Վերջինս, որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում 2010 թվականին վերցվել է հաշվառման՝ բնակարանային պայմանների բարելավման նպատակով:

Քաղաքացի Անահիտ Սմբատյանը հանդիսանում է զինծառայող՝ 1967 թվականին ծնված Ռուբեն Ղուկասի Միրզոյանի մայրը: Վերջինս 1992 թվականի սեպտեմբերի 5-ին զոհվել է Մարտակերտի շրջանում մարտական գործողությունների ժամանակ:

Քաղաքացի Անահիտ Սմբատյանը իր տղայի՝ Արմեն Միրզոյանի, հարսի՝ Մարիա Գոքորյանի և երկու թոռների Ռուբեն և Ինեսա Միրզոյանների հետ հաշվառված բնակվում է Լենինգրադյան

փողոցի հ.32 շենքի հ.41՝ 15.5քմ բնակելի մակերես ունեցող տարածքում, որը սեփականության իրավունքով պատկանում է իրեն:

Վերջինս, որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում 2010 թվականին վերցվել է հաշվառման՝ բնակարանային պայմանների բարելավման նպատակով:

Քաղաքացի Զաբել Դուրգարյանը հանդիսանում է զինծառայող՝ 1959 թվականին ծնված Իսրայել Արշակի Ցամաքյանի մայրը: Վերջինս 1994 թվականի ապրիլի 5-ին զոհվել է Աղդամի շրջանում մարտական գործողությունների ժամանակ:

Քաղաքացի Զաբել Դուրգարյանը անօթևան է և 6 անձով բնակվում են Լենինգրադյան փողոցի հ.32 շենքի հ.41 բնակարանում, որը սեփականության իրավունքով պատկանում է իր հարսին:

Վերջինս, որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում 2011 թվականին վերցվել է հաշվառման՝ բնակարանային պայմանների բարելավման նպատակով:

Քաղաքացի Սուսաննա Սահակյանը հանդիսանում է զինծառայող՝ 1971 թվականին ծնված Գագիկ Լավրենտի Գևորգյանի մայրը: Վերջինս 1994 թվականի մայիսի 3-ին զոհվել է Մարտակերտի շրջանում մարտական գործողությունների ժամանակ:

Քաղաքացի Սուսաննա Սահակյանը անօթևան է և բնակվում է Կիևյան 2-րդ նրբանցքի թիվ 12 հասցեում գտնվող բնակելի տանը, որի սեփականատերը եղբոր տղան է:

Վերջինս, որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում 2011 թվականին վերցվել է հաշվառման՝ բնակարանային պայմանների բարելավման նպատակով:

Քաղաքացի Մարինե Պողոսյանը հանդիսանում է զինծառայող՝ 1962 թվականին ծնված Անդրանիկ Վոլոդյայի Բաղդասարյանի կինը: Վերջինս 1994 թվականի մայիսի 2-ին զոհվել է ՀՀ սահմանները պաշտպանելիս:

Քաղաքացի Մարինե Պողոսյանը անօթևան է և իր ընտանիքի 5 անձով՝ ինքը, երկու տղաները և երկու աղջիկները բնակվում են Արարատյան 1-ին զանգվածի հ.6 շենքի հ.46 բնակարանում, որի սեփականատերը վերջինիս ազգականն է:

Վերջինս, որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում 2012 թվականին վերցվել է հաշվառման՝ բնակարանային պայմանների բարելավման նպատակով:

Քաղաքացի Ռոման Խաչանովը հանդիսանում է զինծառայող՝ 1974 թվականին ծնված Կարեն Ռոմանի Խաչանյանի հայրը: Վերջինս 1994 թվականի հունվարի 21-ին զոհվել է ՀՀ սահմանները պաշտպանելու ժամանակ:

Քաղաքացի Ռոման Խաչանովը անօթևան է և բնակվում է Դավիթ Բեկի փողոցի հ.42/2 հասցեում գտնվող բնակելի տանը, որի սեփականատերը վերջինիս քույրն է:

Նա, որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում 2012 թվականին վերցվել է հաշվառման՝ բնակարանային պայմանների բարելավման նպատակով:

Քաղաքացի Լաուրա Աբրահամյանը հանդիսանում է զինծառայող՝ 1945 թվականին ծնված Սլավիկ Երեմի Խաչատրյանի կինը: Վերջինս 1992 թվականի օգոստոսի 5-ին զոհվել է Մարտակերտի շրջանում մարտական գործողությունների ժամանակ:

Քաղաքացի Լաուրա Աբրահամյանը անօթևան է և իր աղջկա ու երկու թոռների հետ միասին բնակվում է Գյուլիքեխվյան փողոցի հ.25/2 հասցեում գտնվող հ.7 մեկ սենյականոց բնակարանում, որի սեփականատերը վերջինիս աղջիկն է:

Վերջինս, որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում 2013 թվականին վերցվել է հաշվառման՝ բնակարանային պայմանների բարելավման նպատակով:

Քաղաքացիներ Մերուժան և Ալվինա Մարգարյանները հանդիսանում են զինծառայող՝ 1990 թվականին ծնված Զորիկ Մերուժանի Մարգարյանի ծնողները: Վերջինս 2012 թվականի ապրիլի 18-ին զոհվել է մարտական հերթապահության ժամանակ:

Քաղաքացիներ Մերուժան և Ալվինա Մարգարյանները իրենց ընտանիքի 5 անձով բնակվում են Մամիկոնյանց փողոցի հ.54 հանրակացարանային շենքի 28.0 քմ ընդհանուր մակերեսով հ.302, 303 սենյակներում, որոնց սեփականատերը Երևան համայնքն է:

Վերջիններս, որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում 2013 թվականին վերցվել են հաշվառման՝ բնակարանային պայմանների բարելավման նպատակով:

Քաղաքացի Ջուլիետա Մանսուրյանը հանդիսանում է զինծառայող՝ 1957 թվականին ծնված Հարություն Վահանի Հարությունյանի կինը: Վերջինս 1990 թվականի հունիսի 13-ին զոհվել է ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ:

Քաղաքացի Ջուլիետա Մանսուրյանը անօթևան է և իր ընտանիքի 3 անձով՝ ինքը, աղջիկը և տղան բնակվում են Էստոնական փողոցի հ.12 շենքի հ.56 բնակարանում, որի սեփականատերը վերջինիս ազգականն է:

Նա, որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում 2013 թվականին վերցվել է հաշվառման՝ բնակարանային պայմանների բարելավման նպատակով՝ անհատույց պետական ֆինանսական աջակցություն ստանալու համար:

Քաղաքացիներ Լյուդվիգ և Ռաիդա Մինասյանները հանդիսանում են զինծառայող՝ 1968 թվականին ծնված Արամ Լյուդվիգի Մինասյանի ծնողները: Վերջինս 1992 թվականի նոյեմբերի 22-ին զոհվել է Լաչինի շրջանում մարտական գործողությունների ժամանակ:

Քաղաքացիներ Լյուդվիգ և Ռաիդա Մինասյանները անօթևան են և բնակվում են Խորենացի 3-րդ փակուղու հ.13 հասցեում գտնվող բնակելի տան մեկ սենյակում, որի սեփականատեր չեն հանդիսանում:

Վերջիններս, որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում 2013 թվականին վերցվել են հաշվառման՝ բնակարանային պայմանների բարելավման նպատակով:

Քաղաքացի Լյուբա Ավետիսյանը հանդիսանում է զինծառայող՝ 1966 թվականին ծնված Արմեն Գուրգենի Ավետիսյանի մայրը: Վերջինս 1992 թվականի նոյեմբերի 19-ին մահացել է ՀՀ սահմանները պաշտպանելիս ստացած հիվանդությունից:

Քաղաքացի Լյուբա Ավետիսյանը անօթևան է և բնակվում է Բաշինջաղյան փողոցում՝ ազգականի տանը:

Վերջինս, որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում 2013 թվականին վերցվել է հաշվառման՝ բնակարանային պայմանների բարելավման նպատակով:

Քաղաքացիներ Փայլակ և Վերա Շահինյանները հանդիսանում են զինծառայող՝ 1975 թվականին ծնված Սամվել Փայլակի Շահինյանի ծնողները: Վերջինս 1994 թվականի հունիսի 20-ին զոհվել է ծառայողական պարտականությունները կատարելիս:

Քաղաքացիներ Փայլակ և Վերա Շահինյանները անօթևան են և իրենց տղայի՝ Դավիթ Շահինյանի հետ միասին բնակվում են Ն. Շենգավիթ 6-րդ փողոցի հ.31/2 հասցեում գտնվող բնակելի տանը, որի սեփականատերը վերջիններիս ազգականն է:

Նրանք, որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում 2013 թվականին վերցվել են հաշվառման՝ բնակարանային պայմանների բարելավման նպատակով:

Զինծառայող Արտյուշա Ժորայի Այվազյանը ծնվել է 1949 թվականին: Վերջինս, 1991 թվականին զինվորական ծառայության ընթացքում ձեռք բերած հիվանդության պատճառով հանդիսանում է 1-ին խմբի հաշմանդամ:

Արտյուշա Ժորայի Այվազյանը իր ընտանիքի 7 անձով՝ ինքը, կինը, տղան, հարսը և երեք թոռները բնակվում են սպայական հանրակացարանային սենյակում, որի սեփականատեր չեն հանդիսանում:

Վերջինս, որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում 2007 թվականին վերցվել է հաշվառման՝ բնակարանային պայմանների բարելավման նպատակով:

Զինծառայող Հովհաննես Վարուժանի Ավանեսյանը ծնվել է 1995 թվականին: Վերջինս 2013 թվականին ծառայողական պարտականությունները կատարելիս, ստացել է ողնաշար-ողնուղեղային համակցված գնդակային վիրավորում և հանդիսանում է 1-ին խմբի հաշմանդամ:

Քաղաքացի Հովհաննես Ավանեսյանը իր մայրիկի՝ Թամարա Ավանեսյանի հետ բնակվում են Շիրակի փողոցի հ.218, 216 հանրակացարանային սենյակում, որը սեփականության իրավունքով պատկանում է իրենց, սակայն հաշվի առնելով վերջիններիս բնակարանային պայմանների խիստ կարիքավորությունը, ինչպես նաև Հովհաննես Ավանեսյանի տեղաշարժման սահմանափակ հնարավորությունները, նպատակահարմար է գտնվել վերջիններիս բնակարանը փոխանակել 1-ին հարկում՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանի հետ:

Զինծառայող Սարգիս Վանիկի Ստեփանյանը ծնվել է 1983 թվականին: Վերջինս 2014 թվականին ծառայողական պարտականությունները կատարելիս ստացել է վնասվածք և հանդիսանում է 1-ին խմբի հաշմանդամ:

Սարգիս Ստեփանյանը անօթևան է իր ընտանիքի 4 անձով՝ ինքը, կինը, և 2 զավակները բնակվում են Նուբարաշեն խճուղու հ.2 շենքի հ.5 բնակարանում, որտեղ հաշվառված բնակվում են ևս 6 անձ: Բնակարանը կարգավիճակ չունի:

Քաղաքացի Վարդանուշ Քոսակյանը հանդիսանում է զինծառայող՝ 1995 թվականին ծնված Արսեն Աբրեստի Կարապետյանի մայրը: Վերջինս 2015 թվականի մարտի 2-ին զոհվել է մարտական հերթապահության ժամանակ:

Քաղաքացի Վարդանուշ Քոսակյանը հանդիսանում է բնակարանային պայմանների խիստ կարիքավոր և ներկայումս վարձակալական հիմունքներով բնակվում է ազգականի տանը:

Քաղաքացի Արթուր Փափազյանը 1992-1993թթ. հատուկ գնդի կազմում մասնակցել է ՀՀ և Արցախի սահմանների համար իրականացվող պաշտպանական և ազատագրական մարտերին: Վերջինս պարգևատրվել է բազմաթիվ պատվոգրերով, իսկ 2010 թվականին ՀՀ պաշտպանության նախարարության կողմից՝ «Վազգեն Սարգսյան» մեդալով:

Ազատամարտիկ Արթուր Փափազյանը նաև բազմազավակ հայր է և իր կնոջ՝ Գայանե Փափազյանի հետ դաստիարակում է 8 երեխայի՝ 3 աղջկա և 5 տղայի: Փափազյանների բազմանդամ ընտանիքը բնակվում է Վարդաշեն 6-րդ փողոցի հ.66ա շենքի հ.523 հանրակացարանային սենյակում, որի ընդհանուր մակերեսը կազմում է 28.0 քմ և հնարավորություն չի տալիս տարասեռ երեխաների բնականոն զարգացմանը:

Քաղաքացի Արայիկ Հարությունյանը ՀՀ երկրապահ կամավորականների միության անդամ է, պահեստազորի կապիտան ազատամարտիկ: Վերջինս 1991-1993թթ. հատուկ գնդի «Քասախ» վաշտի կազմում մասնակցել է ՀՀ և Արցախի սահմանների համար իրականացվող պաշտպանական և ազատագրական մարտերին: Պարգևատրվել է բազմաթիվ հուշամեդալներով, իսկ 2014 թվականին ՀՀ Նախագծի կողմից՝ մարտական ծառայության մեդալով:

Արայիկ Հարությունյանի ընտանիքը 4 անձով, ինքը՝ Արայիկ Հարությունյանը, կինը՝ Արմենուհի Մխիթարյանը, տղան՝ Արմեն Հարությունյանը և դուստրը՝ Զարուհի Հարությունյանը փաստացի բնակվում են Արշակունյաց պողոտայի հ.24/6 հասցեում, որը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է Արայիկ Հարությունյանին և Սվետլանա Ավագյանին: Բնակարանի բնակելի մակերեսը կազմում է 27.5 քմ, ինչը հնարավորություն չի տալիս նշված ընտանիքի անդամներին ունենալ բնակարանային մինիմալ պայմաններ: Վերջիններս հանդիսանում են բնակարանային պայմանների բարելավման խիստ կարիքավոր:

Հաշվի առնելով նշվածը, ինչպես նաև վերոնշյալ ընտանիքների բնակարանային պայմանների խիստ կարիքավորությունը, նպատակահարմար է գտնվել կայացնելու ավագանու համապատասխան որոշում, որը հնարավորություն կտա ապահովելու հիշյալ քաղաքացիների ընտանիքների կեցության համար անհրաժեշտ բնակարանային պայմանները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու և փոխանակելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու և փոխանակելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2015 թվականի հոկտեմբերի____ի
N_____-Ա որոշման

հ/հ	Զոհիված / կամ հաշմանդամ դարձած/ զինծառայողի ընտանիքի կազմը	Անձերի քանակը	Տրամադրվող բնակարանի հասցեն	Սենյակների թիվը
1	Զոհված՝ Ներսես Գրիգորի Բարբարյան, դիմել է մայրը Վարդուհի Նադրյանը	1	Սիսակյան փողոց հ.16, բն 4	1
2	Զոհված՝ Հարություն Գալուստի Ծաշիկյան, դիմել է այրին՝ Էմմա Ծաշիկյանը	1	Մարգարյան փողոց հ.37, բն հ.86	1
3	Զոհված՝ Ֆուրման Արկադիի Գեորգիյան, դիմել են ծնողները՝ Արկադի Գեորգիյանը և Գալինա Զարգարյանը	4	Սիսակյան փողոց հ.16, բն 5	1
4	Զոհված՝ Տիգրան Եղիշի Հովհաննիսյան, դիմել է այրին Ռիտա Նավոյանը	2	Սիսակյան փողոց հ.16, բն 133	1
5	Զոհված՝ Հակոբ Թովմասի Քիրիզյան, դիմել է մայրը Գրետա Քիրիզյանը	1	Սիսակյան փողոց հ.16, բն 10	1
6	Զոհված՝ Կարեն Աշոտի Վարդանյան, դիմել է մայրը Մայրանուշ Սարգսյանը	2	Սիսակյան փողոց հ.16, բն 3	1
7	Զոհված՝ Աղավնի Հարությունի Տեր-Ստեփանյան, դիմել է մայրը՝ Ժենյա Տեր-Սողոմոնյանը	2	Սիսակյան փողոց հ.22, բն.17	2
8	Զոհված՝ Ռուբիկ Ջիվանշիրի Պետրոսյան, դիմել է այրին Զինա Բարսեղյանը	2	Սիսակյան փողոց հ.16, բն 132	1
9	Մահացած՝ Վարազդատ Հայաստանի Ավագյան, դիմել է այրին Մարինե Ներսիսյանը	3	Սիսակյան փողոց հ.16, բն 131	2
10	Զոհված՝ Սպարտակ Աշոտի Հակոբջանյան, դիմել է այրին Արմիկ Հակոբջանյանը	4	Սիսակյան փողոց հ.22, բն.126	3
11	Զոհված՝ Անդրանիկ Էդիկի Հայրապետյան, դիմել է այրին Անուշ Հայրապետյանը	3	Սիսակյան փողոց հ.16, բն 130	2
12	Զոհված՝ Արմեն Հովհաննեսի Խանամիրյան, դիմել է մայրը՝ Կարինե Խաչատրյանը	1	Սիսակյան փողոց հ.16, բն 8	1
13	Զոհված՝ Գրիգոր Հմայակի Գրիգորյան, դիմել է այրին Սիրվարդ Գրիգորյանը	4	Սիսակյան փողոց հ.22, բն.117	3
14	Զոհված՝ Ռուբեն Ղուկասի Միրզոյան, դիմել է մայրը Անահիտ Սմբատյանը	5	Սիսակյան փողոց հ.16, բն 9	1
15	Զոհված՝ Իսրայել Արշակի Ցամաքյան, դիմել է մայրը Զաբել Դուրգարյանը	1	Սիսակյան փողոց հ.16, բն 115	1
16	Զոհված՝ Գագիկ Լավրենտի Գևորգյան, դիմել է մայրը Սուսաննա Սահակյանը	1	Սիսակյան փողոց հ.16, բն 121	1
17	Զոհված՝ Անդրանիկ Վոլոդյայի Բաղդասարյան, դիմել է այրին՝ Մարինե Պողոսյանը	5	Քանաքեռ 14-րդ փողոց հ. 40 շենք, բն հ.47	3
18	Զոհված՝ Կարեն Ռոմանի Խաչանյան, դիմել է հայրը՝ Ռոման Խաչանյանը	1	Սիսակյան փողոց հ.16, բն 127	1

19	Զոհված՝ Սլավիկ Երեմի Խաչատրյան, դիմել է կինը՝ Լաուրա Աբրահամյանը	1	Սիսակյան փողոց հ.16, բն 128	1
20	Զոհված՝ Զորիկ Մերուժանի Մարգարյան, դիմել է հայրը՝ Մերուժան Մարգարյանը	5	Սիսակյան փողոց հ.16, բն 134	1
21	Զոհված՝ Հարություն Վահանի Հարությունյան , դիմել է կինը Ջուլիետա Մանսուրյանը	3	Սիսակյան փողոց հ.16, բն 124	2
22	Զոհված՝ Արամ Լյուդվիգի Մինասյան, դիմել է հայրը՝ Լյուդվիգ Մինասյանը	2	Սիսակյան փողոց հ.16, բն 116	1
23	Զոհված՝ Արմեն Գուրգենի Ավետիսյան, դիմել է մայրը՝ Լյուբա Ավետիսյանը	1	Մարգարյան փողոց հ.45, բն հ.5	1
24	Զոհված՝ Սամվել Փայլակի Շահինյան, դիմել են ծնողները՝ Փայլակ և Վերա Շահինյանները	3	Սիսակյան փողոց հ.16, բն 112	2
25	Զինծառայող՝ Արտյուշա Ժորայի Այվազյան	7	Սիսակյան փողոց հ.22, բն.124	3
26	Զինծառայող՝ Հովհաննես Վարուժանի Ավանեսյան	2	Սիսակյան փողոց հ.16, բն 6	2
27	Զինծառայող՝ Սարգիս Վանիկի Ստեփանյան	4	Սիսակյան փողոց հ.16, բն 1	2
28	Զոհված՝ Արսեն Ապրեստի Կարապետյան, դիմել է մայրը Վարդանուշ Քոսակյանը	1	Սիսակյան փողոց հ.16, բն 15	1
29	Ազատամարտիկ՝ Արայիկ Ֆրունզի Հարությունյան	4	Սիսակյան փողոց հ.16, բն 123	2
30	Ազատամարտիկ՝ Արթուր Իշխանի Փափազյան	10	Քանաքեռ 14-րդ փողոց հ. 40 շենք, բն հ.27	3